

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԵՐՄԱՆ ԱԲԻԽԻՆ

Որքան որ բազմազան էին Ղ. Ալիշանի հետաքրքրությունները, այնքան էլ բազմաթիվ էին նրա անձնական ծանոթներն ու թղթակիցները: Բացի հայերից (որոնց թիվը հասնում է շատ տասնյակների), Ղ. Ալիշանը տեական շփման մեջ է եղել իր օրերի օտարազգի մի շարք գիտնականների, հատկապես Հայաստանի պատմությամբ, գրականությամբ, արվեստով, հնագիտությամբ ու աշխարհագրությամբ պարագողների հետ, մի խոսքով՝ բոլոր նրանց, որոնց անձնական և դիտական հետաքրքրությունները այս կամ այն կետում առնչվում էին հին Հայաստանին:

Այդ շատերից մեկը ակադեմիկոս Օտտո Հերման Աբիխն էր (1806—1886), Հայաստանի Լրկրաբանության անգուգական հետազոտողը, որը 1844 թ. գարնանից հայոց նոր գրականության հիմնադիրն էր: Աբովյանի ընկերակցությամբ սկսեց իր գիտական հետախուզումները Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնաշխարհներում: Հ. Աբիխը ձեռնարկեց (անհրաժեշտության դեպքում նաև ոտքով) անցել է պատմական Մեծ Հայքի, հարակից շրջանների ու հարևան երկրամասերի համարյա բոլոր գավառները, հետազոտել քիչ թե շատ նշանակալից ամեն լեռնաշղթա ու սարահարթ, գետ ու աղբյուր, հանքավայր ու ջերմուկ, ուսումնասիրությունների արդյունքները պարբերաբար հրատարակելով մեծ ու փոքր բազմաթիվ աշխատությունների մեջ, իսկ կյանքի մայրամուտին արդեն ստեղծել «Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը» դասական աշխատությունը (երկու հատոր, Վիեննա, 1882—1887), որն այսօր էլ պահպանում է իր գիտական մեծ արժեքը և շարունակում է ամենօրյա խորհրդատու լինել բոլոր նրանց, ովքեր պարագում են Լրկրաբանության գործնական ու տեսական հարցերով և Հայաստանի երկրագիտության բազմակնճիռ խնդիրներով:

Հանրահայտ է, որ Ղ. Ալիշանը ևս վաղուց ձեռնարկել էր պատմական Հայաստանի բնաշխարհին նվիրված հանրագումարային աշխատությունների ստեղծմանը՝ միայն թե ավելի լայն ծրագրով: Եթե Հ. Աբիխի գիտական շահախնդրությունները սահմանափակվում էին երկրաբանական ու հարակից հարցերով, Ղ. Ալիշանը հավաքում ու իմաստավորում էր տվյալ բնաշխարհի հետ կապված ամեն կարգի նյութ՝ քաղաքական ու տնտեսական կյանքի պատմության դրվագներ, վիճաբանություններ ու ձեռագիր հիշատակարաններ, բնական սլաքաների և բուսական ու կենդանական աշխարհներին վերաբերող տվյալներ, նշանավոր գործիչների կյանքին և հայ իշխանական տներին ու տոհմերին առնչվող վավերագրեր, կենսագրականներ, ճյուղագրություններ, կանգուն կամ ավերակ վանքերի ու տաճարների, խաչքարերի ու կոթողների նկարներ ու քարտեզներ:

Երկուսն էլ զգում էին միմյանց կարիքը և պատահական չէ, որ ժամանակ անց անձնական ծանոթություն են հաստատում իրար հետ, նամակային կապ պահպանում, միմյանց կարծիք հարցնում, նյութեր փոխանակում, որ շարունակվեց մինչև երկրաբանի մահը (1 հուլիսի 1886):

Վաղուց լինելով հետախնդիր և Ղ. Ալիշանի, և Հ. Աբիխի անձին ու դործին, մասնագիտական գրականությունից տեղեկացել էինք, որ գոյություն ունեն նրանց միջև փոխանակված նամակներ: Ղ. Ալիշանի նամակների հետքերը 1965 թ. հուլիսին գտանք պատահական առիթով, Լենինգրադի հանրային գրադարանի չցուցակագրված հավաքածուներում: Ստանալով նրանց լուսատիպ պատճենները և հրատարակության իրավունք, նամակներն ամբողջությամբ ներկայացնում ենք գիտական հասարակայնությանը:

Հ. Աբիխին ուղղված Ղ. Ալիշանի նամակները թվով վեցն են, դրված են իտալերեն, 1881—1886 թթ. ընթացքում: Նրանց բնագրերը ավելի քան 80 տարի առաջ, գիտնականի այրու կտակի համաձայն, ի թիվս Հ. Աբիխի առանձին աշխատությունների ձեռագրերի, բազմաքանակ օրագրերի, նկարների, գծագրերի, տեղագրական հանույթների ու այլ կարգի նյութերի, նվիրվել են Ռուսիայի կայսերական հանրային գրադարանին: Անցած ժամանակամիջոցում այդ նյութերը ոչ միայն չեն ուսումնասիրվել, այլև շատ քիչ մասով են մշակվել ու ցուցակագրվել: Շատ էջեր, որ ժամանակին գրված են եղել մատիտով, խուսափել էին և դարձել դժվարընթեռնելի, գունավոր նկարների ներկը տեղ-տեղ քայքայվել էր, ձեռագրերից շատերի եզրերը մաշվել էին, առանձին էջեր՝ պատառուտվել:

Ղ. Ալիշանի նամակների վիճակը բարեբախտաբար գոհացուցիչ է. պահպանվել են շատ լավ և դյուրութեամբ վերծանվում են:

Երկու հիմնական հարցի շուրջ են պտտվում Ղ. Ալիշանի նամակները: Դրանցից մեկի առաջագործը Հ. Աբիխն է, և Ղ. Ալիշանն ամեն անգամ, իր գերման բարեկամի հարցասիրությունը օգտագործելու համար, ժամանակագրական և մատենագրական տվյալներ է հաղորդում Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերի մասին: Հարցերից երկրորդը Ղ. Ալիշանն ինքն էր բարձրացրել իրենց նամակագրությունը սկսելուց առաջ, անձնական հանդիպման ու զրույցների ժամանակ, որ տեղի էին ունեցել Վենետիկում: Դա վերաբերում էր Հայաստանի զանազան վայրերում, եղած նյութություններին և արձանագրություններին, որոնք իր շրջագայությունների ժամանակ, 1844 թ. սկսած՝ տեսել, նկարել կամ ընդօրինակել էր Հ. Աբիխը, որոնք մեծապես հետաքրքրում էին Ղ. Ալիշանին, և վերջինս այժմ խնդրում էր նրանից այդ նյութերը կամ նրանց ցուցակը՝ հարկավորների պատճենները վերցնելու և առաջիկայում իր պատմա-աշխարհագրական երկասիրությունների մեջ օգտագործելու համար:

Ջնայած հրատարակվող նյութերի միակողմանի բնույթին (Հ. Աբիխի՝ Ղ. Ալիշանին գրածները մեզ մատչելի չեն), սույն նամակները ցույց են տալիս, որ և՛ Ղ. Ալիշանը, և՛ Հ. Աբիխը քաղաքավարական բարեկամության սիրահարներ չեն եղել: Երկուսն էլ մի սկեռյալ նպատակ են ունեցել՝ հին Հայաստանի հանգամանակից ուսումնասիրությունը աշխարհագրական ու պատմական առումով, և ուժերի ներածին չափ օժանդակել ու ընդառաջել են միմյանց:

Հայաստանի երկրաբանությանը նվիրված իր հիմնաքարային աշխատության մեջ Հ. Աբիխը ոչ միայն հրապարակորեն շնորհակալություն է հայտնել Ղ. Ալիշանին՝ ցույց տված օժանդակության համար, այլև ստացած նամակներից քաղելով Հայաստանում պատահած երկրաշարժերի ու հրաբխային ժայթքումների մասին տվյալները, դասավորել է դրանք ժամանակագրական կարգով, բաժանել երեք մասի («Տեղեկություններ, որոնք հատկապես վերաբերում են Արարատին», «Տեղեկություններ, որոնք վերաբերում են Խլաթին և Սիփանդաղին» և «Ցուցակ երկրաշարժերի հին հայկական աղբյուրներից, 862—1766 թթ.») և տեղավորել իր գրքի հինգերորդ հատվածի «Հին Հայաստանի երկրաշարժերի ժամանակագրությունը» խորագրով գլխում, «Տեղեկություններ երկրաշարժերի ու անձանց մասին, ստացված հայր Ղ. Մ. Ալիշանից» ենթավերնագրի տակ: Հետաքրքրվողները կարող են այդ ամենը կարդալ՝ H. Abich, Geologie des armenischen Hochlandes, I, Westhälfte (Վիեննա, 1882, էջ 435, 444—447): Նույն գլխում կան հայկական հին աղբյուրներից քաղված և երկրաշարժերին վերաբերող բազմաթիվ ուրիշ տեղեկություններ ևս: Դրանք էլ Աբիխին է տրամադրել Խ. Աբովյանի աշակերտ Գաբրիել Խատիսյանը, անցյալի մեր պայծառ, սակայն մոռացված մտավորականներից մեկը: Այսօրինակ գիտական համագործակցությունը այսօր էլ կարող է նախանձ շարժել:

Հրատարակվող նամակներից հինգը իտալերեն բնագրերից թարգմանել է Արթուր Տայանը, մեկը՝ ճարտարապետ Արմեն Զարյանը (№ 3):

Որպես կանոն՝ նամակների թարգմանության մեջ, բոլոր այն տեղերում, ուր Ղ. Ալիշանը ուղղակի մեջբերումներ է արել հայ պատմագիրների երկերից կամ ձեռագիր հիշատակարաններից, խուսափել ենք դրանք ժամանակակից հայերենի փոխադրելուց և բերել ենք ըստ սկզբնաղբյուրների:

Բանաս. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ:

Փ Ս ՈՏ Ս Թ Ղ Թ Ե Ր

1

16 սեպտեմբեր, 1891

Մեծապատիւ տեր

Աշխարհադրական համաժողովի պատճառով¹ իմ վբաղումներն ինձ թույլ չտվին ավելի շուտ նամակ գրելու և, միաժամանակ, այս օրերին էլ արգելք են լինում ի մի բերելու Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժերի մասին այն բոլոր տվյալները, որոնք գրի էի առել։ Առայժմ կասեմ այն, ինչ գիտեմ Արարտի մասին, որը, կարծեմ, առավելագույնս հետաքրքրում է Ձերդ տիրությանը։

Հայոց պատմության հայր Մովսես Խորենացին հիշատակում է (Գիրք Ա, գլ. 30) մեծ լեռան մի հնագույն երկրաշարժի մասին, որի առաջ բերած փլվածքի եզրին Կյուրոսի ժամանակակից Տիգրանը բնակեցրեց մարերի թագավոր Աթոհասակի սերունդներին. իսկ այդ ավերածությունը «լեալ ասեն յահագին իմն շարժմանէ, զոր պատմեն՝ որք բազմաշրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիզօք՝ զբնակութիւն մարդկան շափեցին այլ և մասն ինչ զծով»²։

Սուրբ Եփրեմը երկրաշարժերի պատճառի մասին իր թղթերից մեկում հիշատակում է մի դեպք, որ, հավանաբար, պատահել է իր օրերում, շուրջ 340—341 թվականներին. «Ասացե՛ք մեզ, թե ինչպես, երկրաշարժի հետևանքով, հալկական լեռները, կարծեք փոխադարձ հակամարտության մեջ, փոխնի-փոխ այս ու այն կողմ են ցցվում, այնպես, որ երևում են դուրս ժայթքող բոցեր և շատ ծուխ, և ձորերով անջատված լեռները դարձյալ կանգ են առնում՝ յուրաքանչյուրը վեր խոյանալով յուր կարգում և տեղում»³։

Ուրեմն, նույնիսկ պատմական ո՛չ հեռավոր ժամանակներում ծխում և բուցավառում էին Հայաստանի լեռները։

Ս. Եփրեմի ժամանակներից հետո ես հիշատակություն չեմ գտել Արարատի երկրաշարժի մասին, մինչև 1679 թվականը (հունիսի 14-ը), երբ տեղի ունեցավ մի երկրաշարժ, որ գուցե եղավ ամենից ավերիչը և որից կործանվեց ի թիվս շատ այլ բնակավայրերի նաև Տրդատի նշանավոր պալատը Գառնիում. այդ մասին ակնարկություն անող ժամանակակիցներից մեկը գրում է. «Ի յաւագ լեառն Մասիսէ մինչև ի բլուրն Շամիրամայ իսպառ քակեաց և մեծ աւերումն եղև»⁴։ Մի ուրիշը ավելացնում է. «Պատահեցան վէմք և լերինք և ի պատումանէ վիմացն բոց ծիրանացեալ ելանէր յօղս։ Բարձրացաւ մառախուղն և ծածկեաց զերկիր ի գաւառէն Գառնույ մինչև ցլեառն Արագած հանդերձ լեռամբք և դաշտօք»⁵։

Մրանցից ավելի վաղ ապրող մի այլ գրիչ (1647-ին). որ Ակոռի ղյուղից է, կարճ ասում է. «Անբարի ժամանակներում ենք ապրում. ամեն օր երերման կու կենանք»⁶։

Ինչ վերաբերում է 1840 թվականի նոր և հանրահայտ դեպքին, այդ մասին ունենր սղետից գրեթե երկու ամիս անց գրված զույգ նամակներ, որոնք մեզ տղարկել է մեր մի կուլեղան⁷ նույն 1846 թվականի սեպտեմբեր ամսին։ Նամակագիրներից մեկը, որի անունը Պավել Մանուկոֆ (Պողոս Մանուկյան⁸

—Պ. Հ.), գրում է. «Եւ հնչեաց սև գիշատեսիլ քամի խառն ընդ հրոյ և եկն միասին ահագին սառնամանիքն Մասեաց, [Ակոռի] գիւղն կործանեաց... Եւ այդիս և արտորայս կիղեաց, որ ամենևին ոչ եթող բոյս և տունկ: [600 քրդերից աղատվեցին միայն 107-ը, ոմանք այրված, ոմանք վիրավորված]»⁸: Մյուս նամակադիրը, որի անունը չեմ հիշում և որը, թվում է, դեպքին ականատես է եղել, գրում է. «Եղև անկարծ պատառումն, որ է հուր Մասիսայ լեռնէն ելեալ՝ կրակախառն սև քամի զարմանատեսիլ. որպէս ծծումբ այրէր, և բարձրանայր ի վեր Մասիս՝ բոլոր նոյն վանքովն (Ս. Յակոբայ)... Այս ամենայն բովանդակ բարձրացաւ ընդ քամուն, և անկեալ ի վերայ դեղին՝... կորուս զամենեան. թիւ աւելի քան զ1500 անձինք բնակիչք գիւղին այնր... կորեան... Այլ ևս յայտնի երկու անձինք նոյն կրակէն զերծան. զի տէսանելն (դէմք) նոցա իբրև պարութով այրած... որք են Մկրտիչ և Թադէոս անուանքն: Դարձեալ ևս նոյն կրակախառն քամին եկեալ՝ գեղի պարտիզացն վառեալ եղեալ ծառքն՝ բոլորովին հանեալ յերեսս երկրի ծառոց արմատքն»⁹:

Դուք անշուշտ կհիշեք նաև 1868-ին (հունիսի 2-ին) տեղի ունեցած Բայազեդի երկրաշարժը Թանդուրեկի դղրդյուններով:

Ահա այն բոլորը, ինչ ես հիշում եմ Արարուտի հրաբխային կենտրոնից և կարծում եմ, որ դրանք պակաս ավերիչ չեղան, քան այն, ինչ պատահեց Խլաթում, այսինքն՝ Վանա լճի հյուսիս-արևելյան մասում, ուր, ըստ պատմողների, տեղի են ունեցել նման դեպքեր:

Ինձ ներեցեք իմ այս թերի գրության համար և հաճեցեք պատվել Ձեր հանձնարարություններով, իսկ եթե դուք ինձ թույլ տայիք իմ կողմից որևէ բան հարցնելու Ձեզ, դա կվերաբերեր ամփոփ տեղեկություններին կամ պարզ անվանմանը քիչ ծանոթ վայրերի, ուր, ըստ Ձեր ասածի, դուք տեսել եք Հայաստանի հին շենքերը և հուշարձանները, մի կողմ թողնելով Կովկասի մյուս երկրները, որոնք չեն մտնում իմ հնագիտական հետազոտությունների շրջանակի մեջ:

Մաղթելով Ձեզ առողջություն և հաջողություն,
մնամ Ձեր խոնարհ ծառա

Հ. Ղևոնդ Մ. Ալիշան

2

24 սեպտեմբեր, 1881

Մեծապատիվ և դերհարգելի տեր

Մեծապես շնորհակալ եմ Ձեր շուտափույթ պատասխանի և սիրալիր խոսքերի համար, ինչպես նաև այն առատաձեռն նվերների, որոնցով Դուք ցանկանում եք դյուրություն ընձեռել և օգնել իմ ուսումնասիրություններին և որևէ կերպով սատար հանդիսանալ իմ խեղճ և վշտակիր հայրենիքին¹⁰:

Չուղելով շատ բան խլել Ձեր թանկագին ժամանակից, այս անգամ կխոսեմ կարճ. Ձեր՝ Հայաստանի աշխարհագրական քարտեզը դեռ չի հասել ցուցահանդես, ինչպես մեզ հավաստեց պատվական պարոն Գրեգորիենը: Ուստի դրա մասին չեմ կարող կարծիք հայտնել. բացի դրանից, եթե դա բավականաչափ մեծ չէ, մեզ պետք չի գալու, որովհետև այս օրերս մենք խոսել ենք ներհուն դր. Կիպերտի հետ¹¹, որը հանձն առավ մեզ համար պատրաստել ամբողջ Հայաստանի՝ Մեծ և Փոքր Հայքի քարտեզը՝ մեծ մասշտաբով:

Ինչ վերաբերում է հայկական արձանագրություններին և նկարներին, դրանք ինձ համար շատ ցանկալի և օգտակար կլինեն: Պետերբուրգի կայսերա-

կամ ախտահարողից ևս ստացել եմ Կեստների երեք ալբոմները կամ նկարների հավաքածուն և պատճենահանել եմ տվել ավելի քան 70 նկար¹², որոշ բաներ էլ հավաքել եմ դեսից-դենից: Որպեսզի փրկնողություններ չլինեն, լավ կլիներ, եթե Դուք ազատ ժամանակ ունենալիք, Ձեր նկարների ու ընդօրինակած արձանագրությունների ցանկը կազմեիք, որպեսզի կարողանայի ընտրություն անել. կամ տվելի լավ կլիներ, եթե Դուք դրանք ամբողջությամբ ինձ ուղարկեիք, որպեսզի աչքի անցկացնեի:

Հույս ունեմ մի քանի օրից որոշ տեղեկություններ պատրաստել իշխանի երկրաշարժի մասին¹³, որից առաջացած ծխի և բոցի մասին դեռ խոսվում է, այդ տեղեկությունները կներկայացնեմ Ձեր քննությանը: Առայժմ պատիվ ունեմ մնալու Ձեր խոնարհ ծառա

Հ. Ղևոնդ Մ. Ալիշան

3

<1881, սեպտեմբերի վերջ, Վենետիկ, Սուրբ Ղազար>

Մեծարգո տե՛ր

Ինչպես խոստացել էի մի քանի օր առաջ, այսօր Ձեր դատողությանն եմ հանձնում մի քանի պատմական նշմարներ իշխանի երկրաշարժերի մասին՝ թողնելով Ձեզ որոշելու, թե այդ ցնցումները կապ ունե՞ն արդյոք Սիփան ու Նեմրուժ լեռների կամ էլ իշխանի մոտ գտնվող լեռան հետ, որը, իմ կարծիքով, անուն չունի: Այս լեռը ձգվում է հյուսիս-արևելյան ուղղությամբ, քաղաքից մի ժամվա հեռավորության վրա է ընկած և նրա լանջին գտնվում է մի նշանավոր վանք (Մատնավանք). որի մոտակայքում մի ժայռ կա՝ շրջապատված պատերով և նման է մատուռի: Ըստ ավանդության, ժամանակին երկփեղկված ժայռեր են լղել, իրարից հեռու, որոնց պատվածքի մեջ տարել են դներ, Թադևոս առաքյալը նրանց վճռել և իրար է միացրել երկու ժայռերը¹⁴: Ես կարծում եմ, որ այս ավանդությունն իր մեջ թաքցրած ունի հիշողություն բնական մի աղետի մասին, որը պետք է տեղի ունեցած լինի մ. թ. ա.:

Առաջին պատմական վկայությունը, որը հավաստում է իշխանի գոյությունը, ինչքան ևս գիտեմ, հակոբիկյան ասորիների պատրիարք Նոյին է պատկանում (տե՛ս Ա ս ս ե մ ա ն ի, Bibliotheca orientalis, II, 470—1)¹⁵, որը վերաբերում է 1245 թվականին և որն, անշուշտ, Ձեզ ծանոթ է: 31 տարի հետո, այսինքն՝ 1276 թվականին, ինչպես կարծում եմ, տեղի է ունեցել ամենաուժեղ ցնցումը, որը հիշատակված է մի գրչի (ընդօրինակողի) կողմից, որը ծնվել կամ ապրում էր վանս լճի մոտակայքում.

«...Ի սոյն ամի շարժեաց աստուած մասն ինչ ի յերկրէ և անդնդասոյդ արար զիշխան և զԱրճեշ, և ոչ գիտեմք որչափ մարդոց վախճան եղև. և բովանդակ ամ մի շարժի երկիր և զկատարածն աստուած գիտէ»:

Հետո հիշում է երկու մարդու՝ հոր և որդու, որոնք մահացել են ժայռերի սնցման ժամանակ¹⁶:

1351? Վամուրջ գյուղի եկեղեցում, որը ընկած է իշխանից արևելք, բավականապես հեռու, կարելի է տեսնել ժամանակից եղծված մի արձանագրություն, ուր հիշվում է Նեմրուժ լեռան երկու մասի բաժանվելը:

Ցավոք սրտի, ևս այդ արձանագրության պատճենը չունեմ, չունեմ նաև ընդօրինակությունը նույն գյուղում գտնվող արաբական արձանագրության,

որի բովանդակությունը ինձ անծանոթ է: Սակայն ուզում եմ նշել, որ հայերեն «Պատերով նշված թվականը՝ Պ (800+551) կարող է կասկածելի լինել¹⁷: Հավանական է, որ 800 նշանակող Պ գիրը իրեն կից մի ուրիշ գիր էլ է ունեցել, որը չնչվել է, և եթե, օրինակի համար, լիներ Ղ (90), թվականը կհամապատասխաներ 1441-ին՝ տարի, որի ընթացքում պատահել է մի ահավոր աղետ, որը հիշատակված է Վանի բնակիչներից:

«Յայսմ ամի մեծ նշան եղև, քանզի լեռն Մամբուտ կոչեցեալ որ ի մէջ Խլաք և ի Բաղէշ է, յանկարծակի գոռաց, իբրև զսաստիկ որոտումն ամպոյ, որ երկիրն ամենայն ահաբեկ եղեալ սասանեցան, որ և տղայքն ընդ հարս և ընդ մարս ողբս առեալ լային, վասն զի տեսին, որ սարն պատառեցաւ լայն՝ իբրև դքաղաք մի և այլ փոքր-փոքր, և ի պատառուածէն ի վեր հուր ցողացեալ ելանէր սառախլապատ ծխով և ժահահոտութեամբ, որ և տղայքն ի հոտոյն հիւանդանային, և քարինք եռային յահագին բոցոյն, և մեծամեծ վէմս ընդ երկինս ձգէին ձայնիւ որոտմամբ. որ և ի դղրդմանէն Խլաք քաղաք կարծիս առեալ դողային: Զայս ամենայն տեսին աշօք բացօք և այլ գաւառք»¹⁸:

Նման աղետ, բայց ո՛չ այդքան ուժեղ, տեղի ունեցավ այս տարի՝ 1881 թ. մայիսի 30-ին, ցերեկվա ժամը վեց անց կեսին (եվրոպական ժամանակով): Եւմբութ սարից շանթ էր հորդում, հանքային ջրերը ալեկոծվում էին, և տեղի ունեցած աղետների շարքում նշվում է Խեղուտ գյուղի ավերումը, որը Նեմբութի և Խլաթի միջև էր գտնվում:

Ուզում եմ հիշատակել Բիթլիսի 1869 թ. սեպտեմբերի 11-ի երկրաշարժը: Ցնցումը շատ ուժեղ էր, սակայն ո՛չ նշանակալից վնասներ պատճառած:

Ըստ ժամանակագիրների՝ 1649 թվականի ապրիլի 14 լույս 15-ի գիշերը տեղի ունեցավ Վանի ահավոր երկրաշարժը, որի հետևանքով զխալոբապես տուժեցին քաղաքը, ինչպես և մի շարք գյուղեր և 15 վանք, տեղաշարժվեց սրուշ արտերի հողը, և ջրերի հունը փոխվեց:

Այս եղելությունների մասին խոսում է նույն ժամանակաշրջանում ապրող Առաքել պատմիչը, որի աշխատությունը թարգմանել է Բրոսսեն¹⁹:

Մատթեոս Ուոհայեցի ժամանակագիրը (XII դարի հեղինակ) նշում է մի եղելություն, որը տեղի է ունեցել 1110—1-ին, Վանա լճի վրա և շրջակայքում: Ըստ նրա, կայծեր և բոցեր թափվեցին երկնքից լճի վրա, որը ալեկոծվեց, և ջրերը թափվեցին տատանվող գետնի վրա: Ջրերը արյան գույն ստացան, երկնքից թափվող կրակը մխրձվեց ջրերի խորքը: Հաջորդ առավոտ լճի ափը լիքն էր սատկած ձկներով, և մի շարք տեղեր գետինը ճաքճքվել էր²⁰:

Սրանք են իմ ունեցած սակավաթիվ տեղեկությունները հայկական հողից: Հարգելի պրոֆեսոր, եթե դուք ունեք այլ տեղեկություններ, խնդրում եմ ֆինձ իրադեկ դարձնեք:

Մնամ Ձեր խոնարհ ծառա

Հայր Ղ. Մ. Ալիշան

4

Ս. Ղազարի Մխիթարյան հայրերի միաբանություն
Վենետիկ

Մեծարգո պարոն դոկտոր

Տիկ. կոմսուհի դե Կաստելի ձեռքով՝ մեծ հաճությամբ, ստացա ընթացիկ ամսվա 4 թվակիր Ձեր թանկագին նամակը²¹ և ենթադրեցի, որ հիշյալ տիկի-
Պ Հանդես. № 2

նր դեռ մի որոշ ժամանակ կմնա այդ քաղաքում, փութացնում եմ իմ պատասխանը: Երկար ժամանակ լուր չունենալով Ջեզանից, մտածում էի, որ Դուք դեռ չեք սկսել ձեր ճանապարհորդությունը՝ կամ Թիֆլիսի հնադիտական գիտա-
 ժողովին մասնակցելու և կամ Ջեր մի ուրիշ ուսումնասիրության համար: Հիմա հաստատապես տեղեկացել եմ, որ Դուք գտնվում եք Ալստրիայի մայրաքաղաքում և շարունակում եք հրատարակել Ջեր մեծ գործը, որի մի պրակը մեծ ուրախությամբ ստացել եմ. դա վերաբերում է Արարատի տեսարանին Ակոռիի ճակատագրական օրվանից հետո²²: Ինձ համար կրկնապատիկ թանկ է այդ դեպքի հիշատակությունը, քանի որ դա բխում է ոչ միայն իմ հայրենիքի մեծ երկրաբանից, այլև ազնվագույն զգացումներով լի մի սրտից: Ցանկանում եմ, որ շուտով հաջողությամբ պսակվեն ձեր երկարատև աշխատանքները, հիշյալ գործի հրապարակումով:

Ես չեմ հիշում, թե որոնք և ինչ կարգով եմ նշել Հայաստանի երկրաշարժերը, բայց հիմա, Ջեր ցանկության համաձայն, հակիրճ կերպով կնշեմ այն հեղինակությունները, որոնցից ես քաղել եմ դրանք. կնշեմ նաև դարաշրջաններն ու վայրերը:

862 Երկրաշարժ ձմռանը, Դվինում: Այդ մասին պատմում է ժամանակի մեր նշանավոր պատմագիր և կաթողիկոս Հովհաննեսը. այդ երկը թարգմանել է Սեն Մարտենը²³:

593 Ահալոր երկրաշարժ և հիշյալ Դվին քաղաքի կործանումը իր 70.000 բնակիչներով: Պատմում է նույն պատմագիր Հովհաննեսը, իր մի ուրիշ աշակերտակիցը, և Թովմա Արծրունին՝ ժամանակի մի ուրիշ նշանավոր սլաւոմագիր, որին թարգմանել է արևելագետ Բրոսսեն²⁴:

1679 Երկրաշարժ Երևանում, որը կործանում է Տրդատի նշանավոր տաճարը Դառնիում: Դեպքը հիշատակում են ժամանակակիցները, ձեռագրերի ընդօրինակողները²⁵:

736 Երկրաշարժ Դաւալագյազում (Վայոց-ձոր), որ տեւել է 40 օր շարունակ: Դեպքը պատմում է Ստեփանոս Օրբելյանը, այդ երկրամասի պատմագիրն ու եպիսկոպոսը XIII դարի վերջին²⁶:

1659 Երկրաշարժ Տաթևում, վերոհիշյալ երկրամասում: Դեպքը պատմում է Առաֆելը, XVII դարի արժեքավոր պատմագիր, որին թարգմանել է Բրոսսեն. դեպքը հիշատակում են նաև ուրիշ գրիչներ և տարեգիրներ²⁷:

1276 Երկրաշարժ Խլաթում և Արեւշում: Դեպքը հիշատակում են Ասսեմանին (Արևելագիտական գրադարան, II, էջ 470—471) և ժամանակի գրիչները²⁸:

1441 Երկրաշարժ Մամուդ կամ Նեմուդ լեռան, Խլաթի ծայրամասում. Դեպքը հիշում է ժամանակակից մի գրիչ, ականատես վկա²⁹:

1648 Երկրաշարժ Վանում և շրջակայքում (2—12 ապրիլ): Դեպքը պատմում է վերոհիշյալ Առաֆելը, գլուխ Լէ³⁰:

802 Երկրաշարժ և Կողոտու լեռների փլուզում, Եփրատի մոտ: Հիշատակում է մեր անվանի տարեգիր Սամուել Անեցին, XII դարի հեղինակ³¹, թարգմանված Բրոսսեի ձեռքով:

865 Նույն հեղինակը այդ տարում հիշատակում է երեք ամիս տևողությամբ մի երկրաշարժ, որ սկսվել է մեծ պահքին, բայց չի նշում դեպքի վայրը կամ շրջանը³²: Վերոհիշյալ Առաֆելը պատմագիրը մի ժամանակագրության մեջ հիշում է Երզնկայի երկրաշարժերը, որոնք տեղի են ունեցել տարբեր ժամանակներում, և որոնցից մի քանիսը հիշում են գրիչները և ուրիշներ³³:

1835 (ամռանը կամ աշնանը) Կեսարիայի (Կայսերի) մեծ երկրաշարժը. 250—300 տուն խորտակված, 600 մարդ մահացած: Հիշատակում են ժամանակակիցների նամակները³⁴:

1641, փետրվար 5 (15): Երկրաշարժ Քավրիզում: Դեպքը սլատմում է Առաֆելը, գլուխ ԼԵ³⁵:

1607 Երկրաշարժ Շամախիում: Դեպքը հիշատակում է մի ժամանակակից, հետադաշում Նախիջևանի կաթոլիկ եպիսկոպոս³⁶:

1269 Երկրաշարժ Կիլիկիայում: Դեպքը հիշատակում է ժամանակակից մի պրիշ և Սանուդի Տորչելլոն, ժամանակակից վենետիկցի³⁷:

1514 Ուրիշ Երկրաշարժ Կիլիկիայում—Միլետինեում: Դեպքը հիշատակում է վենետիկցի Դանիելե Բարբարոն (իտալական արխիվ. VII. 1061)³⁸:

1605 Երկրաշարժ Կեմախի շրջակայքում, Երզնկայի սահմանակից: Հիշատակում է ժամանակակից գրիշը³⁹:

1766 (28 սեպտ.—9 հոկտ.) Երկրաշարժ Հայաստանի հյուսիս-արևելքում, Համշենում, Թուրքումում և Իսպիրում: Հիշատակված է ժամանակակիցների նամակներում⁴⁰:

Այստեղ վերջացնում եմ իմ այս սակավաթիվ տեղեկությունները, մաղթելով Ձեզ քաջառողջություն ու հաջողություն և պատիվ ունենալով մնալու

Ձեր խոնարհ ծառա

Հ. Առնդ Մ. Ալիշան

14 փետրվար, 1882

5

Վենետիկ, Ս. Ղազար, 8 հունվար, 1884

Մեծապատիվ պարոն դոկտոր

Երկար ժամանակ լուր չունենալով Ձեր թանկագին առողջության և Ձեր հրատարակությունների մասին, պատիվ ունեմ այս երկտողով Ձեզ հիշեցնելու իմ մասին, ինչպես մեկի, որ շատ բարձր է գնահատում Ձեր գիտելիքներն ու գործերը, որոնք առանձնապես ինձ հետաքրքրում են:

Մաղթելով Ձեզ ամեն հաջողություն և

երջանիկ տարիներ,

մնամ Ձեր ծառա

Հ. Առնդ Մ. Ալիշան

6

Վենետիկ, Ս. Ղազար, 19 հունվար, 1886

Մեծարգո պարոն դոկտոր

Ձեր շատ սրտագին նամակից հետո ստացա նաև արկղը Ձեր հոյակապ աշխատության⁴¹, որի (թեև սակավ հմուտ եմ երկրաբանության) ամենաբարձր գնահատողներից մեկն եմ: Որովհետև ես ևս ավելի քան քառասուն տարի ուսումնասիրել եմ պատմությունն ու աշխարհագրությունը իմ խեղճ հայրենիք Հայաստանի, որը երբեք չեմ տեսել և ոչ էլ հույս ունեմ տեսնելու, ապա կարող եք հասկանալ, թե որքան ինձ հաճույք են պատճառում Ձեր տեսակետներն ու մանրամասն նկարագրությունները, մասնավորապես երկրագրական քարտեզները: Միաժամանակ Դուք կհասկանաք, թե որքան շատ եմ Ձեզ շնորհա-

պարտ այդ նվիրատվության համար: Ես աստիճանաբար կգբաղվեմ դրանով և հույս ունեմ զգալի շափով օգուտ քաղել դրանից, որի մասին Ձեզ կգրեմ իր ժամանակին⁴²:

Բայց ինչքան ինձ ուրախացրեց Ձեր նամակի առաջին մասը, այնքան վրշտացրեց վերջինը, երբ իմացա Ձեր ընկնելու դժբախտ դեպքը, որը կարող էր, իրոք, շատ ծանր հետևանքներ ունենալ, եթե աստվածային նախախնամությունը չբավարարվեր Ձեր կրած վախով և ցավերով, միաժամանակ Ձեզ զգուշացնելով չափավորել Ձեր դեռ երիտասարդական գիտական եռանդը Ձեր հառաջացած տարիքի համեմատությամբ: Ես նույնպես տառապելով հողացալով, լավ եմ հասկանում, թե ինչքան ծանր բան է այդ վիճակում ցանկանալ աշխատել, գրքեր ուսումնասիրել, գրել և չկարողանալ կամ կարողանալ շատ դժվարությամբ և ցավերով: Ձեզ պատահած արկածի մասին կարդալիս իսկույն մտաբերեցի թերապևտիկ վաննաներով բուժումը և տեսա, որ Ձեր նամակի վերջին արտահայտությունը ևս դրան է հանգում: Բոլոր սրտով ցանկանում եմ, որ այս ձմեռվա մնացած մասը չլինի այնպես խիստ, ինչպես եղավ առաջին մասը, և որ նրան հաջորդի մեղմ գարունը, սկզբնավորումը առողջարար ամռան, որը Ձեզ կվերադարձնի հնարավոր կորույր, որով Դուք կկարողանաք նաև իրականացնել Ձեր հիանալի մտադրությունը հաճելի և պատվավոր մի այցելություն տալու Վենետիկ. դա ինձ հնարավորություն կտա մի անգամ ևս ողջունելու Ձեր անձնավորությանը, որը գուցե միակն է, որ այնքան երկար ժամանակ և այնքա՜ն ջանասիրաբար ու խորապես ուսումնասիրել է իմ հայրենի հողը:

Մեծ հաճույքով ուղարկում եմ Ձեզ փոստով, Ձեր նշած հասցեով, իմ «Սիսուանը»⁴³, և ջերմագինս Ձեզ մաղթելով Ձեր մեծ գործի բարեհաջող ավարտ, մնամ

Ձեր խոնարհ ծառա

Հ. Ղևոնդ Մ. Ալիշան

Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Խոսքը աշխարհագետների համաշխարհային երրորդ համաժողովի մասին է, որ տեղի է ունեցել 1881 թ. սեպտեմբերին (15—22), Վենետիկում և ուր Ալիշանը հանդես է եկել «Աշխարհագրություն հայկական» («Geonimia Armena») խորագրով ղեկուցումով՝ կարդացված իտալերեն: Հրատարակվել է ղեկուցման և՛ իտալերեն բնագիրը, և՛ հայերեն թարգմանությունը (Վենետիկ, 1881): Համաժողովի և նույն օրերին բացված ցուցահանդեսի մասին մանրամասնություններ տե՛ս «Բաղմավեպ» հանդեսի 1881 թ. տարեգիրքը:

2. Համեմատի՞ր Ղ. Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանյայց, Վենետիկ, 1890, էջ 458: Խորենացու պատմագրքում հիշյալ հատվածը ավելի ընդարձակ է. «Բայց զնախասացեալ կինն Անուշ բնակեցուցանէ որդւոք իւրովք յանդորրութեան սպառուածի փլածին մեծի լերինն: (Ձորմէ լեալ ասնն յահագին իմն շարժմանէ. զոր պատմեն՝ որք բաղմաշրջութեամբ հրամանաւ Պտղոմեայ ասպարիսօք զբնակութիւնս մարդկան շափեցին, այլ և մասն ինչ զծով և զանրակս յայրեցածէն մինչև ցՔիմիւռոն)» (Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 83—84):

3. Նամակում քաղվածքը բերված է լատիներեն, առանց մատենագիտական տվյալների: «Այրարատում» ևս բերված է նույն լատիներեն հատվածը, սակայն նշված է աղբյուրը՝ «Գործք Ս. Եփրեմայ», հատ. Գ, էջ 48, որն իրականում հունարեն է: Հին հայերեն թարգմանություն դոյություն չունի:

4. Ղ. Ալիշանի «Այրարատում» այս հիշատակարանից միայն մի քանի բառ է բերված (տե՛ս էջ 459), Ամբողջությամբ լույս է տեսել «Արարատ» ամսադրի 1888 թ. մեջ (էջ 526—531), ապա՝

հապավումներով արտատպվել՝ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ. հատ. 11, Երևան, 1956, էջ 280: Բուն հիշատակարանը գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում, № 1512 ձեռագրի 558ա—559ա էջերում:

5. «Այրարատում» այս հիշատակարանի մասին միայն հարևանցի ակնարկ կա, մինչդեռ իրականում այն քաղված է Երկու ձեռագրերից, որոնք պահվում են Մաշտոցի անվան մատենադարանում (№ 435, էջ 321ա—322ա և № 2361, էջ 335ա—337ա): Հիշատակարանի հեղինակներն են Դրիդոր Երևանցին և Սուքիաս քահանան: Հրատարակված է՝ «Մանր ժամանակագրություններ», հատ. 11, էջ 279—280: Երևանի 1679 թ. երկրաշարժին վերաբերող այս, ինչպես և Զախորդ հիշատակարանին Ղ. Ալիշանն, անտարակույս, ծանոթացել է իր բաղմամբով ուսահայ թղթակիցներից որևէ մեկի կատարած արտագրության միջոցով (Վ. Բաստամյանի, Մ. Սմբատյանի կամ մեկ ուրիշի):

6. Համեմատի՜ր «Այրարատ», էջ 473: Ընդ որում, այստեղ և այլուր ուղիղ փակագծերի մեջ առնված բառերը Ղ. Ալիշանի նամակներից են, և «Այրարատը» շունի:

7. Թե ո՞ւմ նկատի ունի, պարզ չէ, թերևս Մխիթարյան հայրերից որևէ մեկին:

8. Քաղվածքը բերում ենք ըստ «Այրարատի» (էջ 474), քանի որ իտալերեն թարգմանությունը այլափոխված է:

9 Այս երկրորդ նամակը ևս բերում ենք ըստ «Այրարատում» տպագրված բնագրի (էջ 473): Ընդհանրապես, Ղ. Ալիշանն ու իր թղթակիցները 1840 թ. երկրաշարժը ավելի մի ահավոր հրաբուխ են ներկայացնում, որ չի՜ համապատասխանում ճշմարտությանը: Ավերածությունների հետևանքներն ու պատճառները մանրամասնորեն վերլուծված են Մ. Վազների «Reise nach dem Ararat und dem Hochland Armenien» գրքում (Շտուտգարտ և Տյուբինգեն, 1848, էջ 163—186): Վազների ղիսավոր լրատուներն են եղել Ակոտի երբեմնի գյուղացիներ Սաղաթել Խոջայանը, Նասիր Մկրտչյանը և Հովհան Հովհաննիսյանը, որոնց հարցուփորձ է արել Խ. Աբովյանի Դիջոցով, 1843 թ. մայիսին (նույն տեղում, էջ 165—166):

10. Թե ի՞նչ նվերներ էր ուղարկել Հ. Աբիխը Ղ. Ալիշանին, պարզ չէ, թերևս, Հայաստանի դանադան վայրերի նկարներ կամ քարտեզներ:

11. Հայնրիխ Կիպերտը (1818—1899) գերմանացի հանրահայտ աշխարհագետ և քարտեզագիր էր, հատկապես հին աշխարհագրության լուրջ գիտակ: Հրատարակել է նաև Հայաստանի առանձին բնաշխարհների տեղագրությանը վերաբերող աշխատություններ և քարտեզներ: Գիտական մեծ արժև ունի Կիպերտի՝ Փոքր Ասիայի քարտեզը («Karte von Kleinasien»), բաղկացած 24 թերթից, որի վերջին հրատարակությունը լույս է տեսել ետմահու՝ 1902—1907 թթ.:

12. Կեստները (Քեստներ) գերմանացի նկարիչ էր, ուսական կայսերական ակադեմիայի կողմից 1849 թ. դործուղվել էր Հայաստան (և Վրաստան)՝ նկարելու տեղի ճարտարապետական հուշարձաններ և ընդօրինակելու արձանագրություններ, որ և նա կատարել է, առանձին ավրոմների մեջ հավերժացնելով ղիսավորապես Անիի հնության հիշատակարանները:

13. Տե՛ս հաջորդ նամակը, որ շնայած անթվակիր է, բայց դյուրությամբ որոշվում է գրության ճշգրիտ ժամանակը (1881, սեպտեմբերի վերջին օրեր):

14. Ղ. Ալիշանը այս ավանդությունը վերցրել է հ. Ն. Սարգիսյանի «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս» աշխատությունից (Վենետիկ, 1864, էջ 272), որ բառացի ասված է. «...Աւանդի ի Կոնդակի վանացս ի Թաղէէ առաքելոյ հիմնարկեալ սորին. քանդի ի քարաժայռս տնդ բնակութիւն եղեալ դիւաց, հրեշտակի Լստուծոյ երևեալ առաքելոյն մատնանիշ ցուցանէ նմա զտեղին շինել տաճար աստուծոյ, և յայնմանէ կոչեցաւ, ասեն, Մատնէվանք: Իսկ դիւարնակ քարն երկփեղկեան յորոյ ի պատառուածին խմբեալ կային դեւքն՝ զօրութեամբ Քրիստոսի ի մի եկեալ որպէս եթէ կլանէ զդեւսն և կոչի ապառաժն այն ղիւակուլ, որ է առ կշտիւք մեհաստանին և արդ պատեալ որմովք յառաջոյ կողմանէ և տանիս յորինեալ իբրև զմատուռն ինչ»:

15. Հովսեփ Սիմոն Ասսեմանին (1687—1768) հանրաճանաչ արևելագետ էր և Վատիկանի գրապահ, Հրատարակել է հիշյալ հաստատության արևելյան ձեռագրերի նկարագրությունը («Bibliotheca orientalis Clementino Vaticana», 6 հատոր, Հոռոմ, 1719—1728): Ալիշանը նկատի ունի այդ աշխատությունը:

16. Բուն ձեռագիրը, որից քաղված են մեջբերված տողերը, պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում (№ 95): Ամբողջական հիշատակարանը տե՛ս Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հատ. 1, Վենետիկ, 1914, էջ 427: Երկրաշարժի օրը վախճանված մարդկանցից երկուսի մասին հիշատակարանի շարունակության մեջ ասված է. «Քանդի այր մի էր բարիսէր և երկիւղած յԱրճեշ քաղաք,

սնունդ հաշիկ, ինքն և որդին իւր Կոստանդին տարածած մնացին մահուամբ ընդ շարժեալ վիմացն, որով և յանցանք նոցա ջնջեսցին և նահատակութիւն նոցա ընդ Ս. Ստեփանոսի խառնեսցին: Արձեշի և հլաթի երկրաշարժը որոշ ժամանակագիրներ ղնում են նաև 1275 թվականին (տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», հատ. I, էջ 44, 66 և հատ. II, էջ 146):

17. Նկատի է ունեցել հ. Ն. Սարգիսյանի վերոհիշյալ գրքի՝ «Սասանութիւն և պատահուած լերինդ (իմա՛ Նեմրութ—Պ. Հ.) ի Պ. թուի՝ յիշատակի ի կիսաեղծ արձանագրի եկեղեցւոյ Կարմունջ գեղջ (էջ 272) և թի շրջանակի կամարի միոյ որ ի կողմանէ ծովուն՝ կայ արձանագիր քիւֆր տառիւք» (էջ 273) արտահայտութիւնները:

18. Տե՛ս Լ. Խաչիկյան, Ժեղարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 516, որն իր հերթին այն արտագրել է Առաքել Դավրիժեցուց և Ղ. Ինճիճյանի ու Մ. Ավգերյանի աշխատութիւններէց: Բուն ձեռագիրը, որին կցված է եղել հիշատակարանը, մեզ անծանոթ է:

19. Տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 489—494: Ղ. Ալիշանը նամակում սոսկ մեկ-երկու բառով վերաշարադրել է այս ընդարձակ գլխի բովանդակութիւնը: Դավրիժեցու մոտ երկրաշարժի թվականը փոքր-ինչ տարբեր է. «Թուակա-նութեան» Հայոց ՌՂԷ [=1097+551=1648]. յԱպրիլ ամսոյ երկուսն, յաւազ ուրբաթու գիշերն՝ որ լուսանայր ի լոյս աւագ շաբաթ աւուրն» (էջ 489), որը նոր տոմարով անում է՝ 1648 թ. ապրիլի 12 լոյս 13-ի գիշերը: Դեպքը 1648 թ. է ղնում նաև անանուն ժամանակագիրը, իսկ Մատենադարանի N 1472 ձեռագիրը՝ 1646 թ. (տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», հատ. II, էջ 285—286):

20. Ինչն աղբյուրը տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 316: Բառացի այսպես է. «...յաւուր միում ի մթին գիշերին կտրեալ եղև հուր ի վերնական հաստատութենէ երկնից և ի բարձրութենէ անտի ցոլացեալ եղև և հարեալ զարկանէր զծովն Վասպուրականայ. և սաստկապէս գոչեալ ծովն և ցոլացեալ հարկանէր զցամաքն, և դողաց ծովն և ցամաքն ահաւոր դղրդմամբ. և փոխեաց ծովն զգոյն իւր ի գոյն արեան. և հուրն այն պատահեաց զհաստատութիւնն անդնդոց. իսկ ի յառաւօտուն տեսանէին սատակեալ զբազմութիւն ձկանց ծովուն, և կային կուտեալ ձկունք առ հզերք ծովուն որպէս զփայտակոյտս մայրեաց, և հոտեալ եղևն վայրքն ի սաստիկ բազմութենէն. և տեսանէին զցամաքային վայրքն, զի պատահեալ չերձ ի հերձ ի բազում տեղիս ահաւոր խորութեամբ, և ամենայն լսողքն զարմանային...»:

21. Հ. Աբիխի՝ 1882 թ. փետրվարի 4-ին Վիեննայից Ղ. Ալիշանին ուղարկած նամակը հիշյալ կոմսուհու ձեռքով մեզ անծանոթ է:

22. Խոսքը, թերևս, հ. Աբիխի «Der Ararat in genetischer Beziehung betrachtet» (Արարատը ծագումնաբանական հայեցակետով) հոդվածի մասին է (լույս տեսած Բեռլինի «Zeitschrift für Deutsche geologische Gesellschaft» հանդեսում, 1870, հատ. XXI), եւամ նմանօրինակ մեկ ուրիշ գործի, կամ էլ Աբիխի ղխավոր աշխատության առանձին էջերի, քանի որ այն լույս է տեսել նամակի գրութիւնից, ավելի ուշ և Արարատին վերաբերող գլուխը տեղավորված է գրքի վերջիէ մասերում (հինգերորդ հատված, էջ 390—415):

23. Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1912, էջ 133—134:

24. Նույն տեղում, էջ 162—163: Նաև՝ «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Տիգրիս, 1917, էջ 371—372:

25. Տե՛ս «Ջաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հատ. II, գլ. ՄԱ, Վաղարշապատ, 1870, էջ 104—105: «Մանր ժամանակագրութիւններ», հատ. I, էջ 303, 311, 313, 327, 332, 395, 491 և հատ. II, էջ 272, 279—280, 414, 522:

26. «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Որինեաց», Տիգրիս, 1910, էջ 142—143: Միայն թե ըստ այս աղբյուրի երկրաշարժը տեղի է ունեցել 735 թ.: Տե՛ս նաև՝ Գ. Հովսեփյան, Միսթար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931, էջ 21:

27. Արդյո՞ք Ղ. Ալիշանը չի շփոթել թվականները և արդյո՞ք նրա ակնարկը Առաքել Դավրիժեցու պատմագրքի ի՞նչ գլխին (էջ 260—266) չի վերաբերում, ուր նկարագրված է Սյունյաց մեծ անապատի «սասանութիւնը» (հմտ. նաև՝ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1907, մասն Բ, էջ 623—625, նաև՝ Սիսական, Վենետիկ, 1893, էջ 223):

28. Հայկական աղբյուրների տվյալներից երկուսը տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», հատ. I, էջ 60 և հատ. II, էջ 146, բայց երկուս վկայութիւնների համաձայն էլ երկրաշարժը 1275 թ. է տեղի ունեցել և ո՛չ 1276: Միայն մի տվյալ ղնում է 1276-ին (ՌՄՀՀ) (տե՛ս նույն տեղում, հատ. I, էջ 44):

29. Համապատասխան հիշատակարանը արդեն բերված է Ղ. Ալիշանի երրորդ նամակում, Սմբողջությունը տե՛ս է. *Խ ա չ ի կ յ ա ն*, նշվ. աշխ., էջ 516:

30. Տե՛ս վերևում, ծան. 17, քաղված՝ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ», էջ 489—493:

31. Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 90—91:

32. Նույն տեղում, էջ 95:

33. «Մանր ժամանակագրութիւններ» մեջ կան հիշատակութիւններ երդնկայում տեղի ունեցած բազմաթիվ երկրաշարժերի մասին, որոնք նշում ենք ստորև, տալով նախ թվականը, իսկ ապա, փակագծերի մեջ՝ աղբյուրը: Հոմեական թվանշանը մատնանշում է հատորը, արտ-բականը՝ էջը:

1045 (II, 131—132)

1166 թե՛ 1168 (I, 25 և II, 135)

1236 (II, 139, 264)

1254 (II, 141, 264)

1268 (II, 264)

1281 (II, 264)

1287 (II, 148)

1290 (II, 264)

1345 (II, 264)

1374 (II, 264—265)

1457 թե՛ 1458 (I, 392 և II, 212, 215, 265, 284, 393):

Ժիշտը, անշուշտ, 1457-ն է, որովհետև հիշվում է նաև ձեռագիր հիշատակարաններում (տե՛ս է. *Խ ա չ ի կ յ ա ն*, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ. Երևան, 1958, էջ 95, մասն Գ, Երևան, 1967, էջ 429):

1463 (II, 354—355)

1482 (I, 169, 392 և II, 265, 284, 393)

1535 (I, 239)

1576 (II, 267)

1584 (I, 173 և II, 268, 284)

1667 թե՛ 1668 (I, 243 և II, 519) և այլն:

Ինչ վերաբերում է Առաքել Դավրիժեցուն, ապա նրա պատմության ՄԶ հատվածում հիշվում են երգնկայի՝ ՈԶե (1236), ԶԺե (1268), ԶԼ (1281), ԶԼԶ (1287), ԶԼԹ (1290), Պե (1356) և ՊԻԳ (1374) թթ. երկրաշարժերը (տե՛ս էջ 624—627):

34. Այդ նամակները մեզ մատչելի չեն:

35. «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ», էջ 481—485: Այս երկրաշարժը հիշում են նաև ժամանակագիրները (տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», հատ. I, էջ 302 և հատ. II, էջ 283—284, 412):

36. Աղբյուրը մեզ մատչելի չէ: «Մանր ժամանակագրութիւններից» (տե՛ս հատ. I, էջ 243, 251, 303 և հատ. II, էջ 272) հայտնի է Շամախիում տեղի ունեցած մի երկրաշարժ՝ 1668 կամ 1666 թ.:

37. Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 8 և 555: «Մանր ժամանակագրութիւններ». հատ. II, էջ 74 («Փլան ի շարժէ Սարվանտիքարն և Համուսն և Դեղընքարն և այլ վանորայք և ամրոցք և գեղորայք և Սև լէռն»): Նաև՝ հատ. I, էջ 83, 97 և հատ. II, էջ 512, 533:

38. Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 8 («Այլ ոմն... ուղևորեալ ի նոյն կողմանս՝ վկայէ մեծի սասանութեան եղելոյ յամի 1514 ի Տարսոն, յԱտանայ և յայլ կողմանս մինչև ի Մելիտինէ յսկ»):

39. Աղբյուրը մեզ ծանոթ չէ:

40. Ակնարկվող նամակները մեզ մատչելի չեն:

41. Պոսքն, առանց այլևայլության, Հ. Արիխի „Geologische Forschungen in den Kaukasischen Ländern, II. „Geologie des Armenischen Hochlandes, I. Westhälfte“, Wien, 1882 (Երկրաբանական հետազոտութիւններ Կովկասյան երկրներում, II, Հայկական լեռնաշ-

ի արհի երկրարանությունը, I, Արևմտյան մաս, Վիեննա, 1882) աշխատության մասին է (Արևելյան մասը լույս տեսավ հետմահու՝ 1887 թ.):

42. Հ. Արիսի գրքից Ղ. Ալիշանի փոխ առած նկարները և կատարած բաղվածքները սփռված են «Այրարասի» շատ էջերում, որ հաստատվում է հեղինակի արած բարեխիղճ նշումներով և գրքին կցված նկարների և անունների ցանկերով: Նույն 1886 թ. հուլիսի 1-ին Արիսը վախճանվեց, և Ալիշանը գուցե իր դիտողությունները այլևս չգրեց: Բոլոր դեպքերում սա Ալիշանի՝ Արիսին գրած և մեզ հայտնի վերջին նամակն է:

43. Ղ. Ալիշանի «Սիսուանը» լույս է տեսել 1885 թ.:

ПИСЬМА ГЕВОНДА АЛИШАНА ГЕРМАНУ АБИХУ

Доктор филол. наук П. О. АКОПЯН

(Резюме)

Начиная с 80-х годов XIX в. появились в немецком переводе некоторые отрывки из писем известного армянского поэта и ученого Гевонда Алишана, адресованных акад. Герману Абиху, однако полный текст этих писем до сих пор не был доступен исследователям. Они даже считались утерянными.

Публикуемые в переводе на армянский язык письма Гевонда Алишана написаны на итальянском языке. Они хранятся в Рукописном отделе Государственной публичной библиотеки имени М. Е. Салтыкова-Щедрина в Ленинграде. Эти письма, датированные 1881—1886 гг., представляют определенный интерес для изучения личных и научных связей Гевонда Алишана с Германом Абихом и содержат важные замечания по исторической географии Армении.